«Օժանդակություն ճանապարհին» ծառայության կանոնները և սակագները

1. «Օժանդակություն ճանապարհին» ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) նախատեսում է Քարտատիրոջ պատվերով խափանված մարդատար ավտոմեքենայի (քաշը չպետք է գերազանցի 3 տոննան) տարհանման ծառայության մատուցում ՀՀ տարածքում:

2. Ծառայությունը Քարտատիրոջը հասանելի է շուրջօրյա և իրականացվում է բացառապես վերջինիս կողմից (010) 31 99 99 հեռախոսահամարով զանգահարելու միջոցով կատարված պատվերի հիման վրա:

3. Ծառայությունը Քարտատիրոջը մատուցվում է անվճար, տարվա ընթացքում առավելագույնը 2 (երկու) անգամ և սույն պայմանների 4-րդ կետում սահմանված դրույթների ապահովման պայմանով: Տարվա հաշվարկը կատարվում է Քարտը ձեռք բերելու օրվանից 1 (մեկ) օրացուցային տարի հիմքով և շարունակվում նույն սկզբունքով: Տարեկան 2 (երկու) անգամ Ծառայության մատուցումը ներառում է ինչպես հիմնական, այնպես էլ կից Քարտատերերի համար մատուցված ծառայությունների հանրագումարը:

4. Ծառայության անվճար մատուցման համար սահմանված են հետևյալ պայմանները.

ա) Քարտատերը պետք է ապահովի իր ներկայությունը տարհանման ենթակա ավտոմեքենայի գտնվելու վայրում և իր American Express Gold քարտի կամ անձը հաստատող փաստաթղթի առկայությունն իր մոտ Ծառայության մատուցման պահին: Ծառայության մատուցման պահին տարհանվող տրանսպորտային միջոցը պետք է ունենա հիմնական հայկական հաշվառման համարանիշ, որը կհամապատասխանի տվյալ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրում նշված հաշվառման համարանիշին: Սա նախապես հաստատվում է Քարտատիրոջ կողմից պատվեր կատարելիս, այնուհետ ստուգվում նշված հասցեով ավտոմեքենայի տարհանման նպատակով ուղարկված քարշակ մեքենայի ժամանումից հետո՝ քարշակ ծառայություն իրականացնող գործընկեր կազմակերպության վարորդի կողմից բանկ զանգահարելու և բանկի կողմից Քարտատիրոջ ինքնությունը հաստատելու միջոցով:

բ) Քարտատերը պետք է ապահովի իր ներկայությունը ավտոմեքենայի տարհանման վերջնակետում, ինչը հաստատվում է քարշակ ծառայություն իրականացնող գործընկեր կազմակերպության վարորդի կողմից Ծառայության մատուցման ստացականի լրացման և Քարտատիրոջ կողմից ստորագրման միջոցով:

5. Ծառայության անվճար մատուցումը չի տարածվում նոր գնված ավտոմեքենաների՝ մաքսատան տարածքից տարհանման դեպքերի վրա:

6. Ծառայությունից անվճար օգտվելու համար սահմանված պատվերների քանակը գերազանցելու կամ սույն պայմանների 4-րդ կետում սահմանված պայմաններն ապահովել չկարողանալու դեպքում Քարտատերն իրավունք ունի օգտվել Ծառայությունից՝ Ծառայությունը մատուցած ընկերությանը Ծառայության արժեքն իր կողմից վճարելու և դրա մասին պատվերի իրականացման պահին իր ցանկությունը բանկին նախապես հայտնելու պայմանով:

7. Ծառայության արժեքը Քարտատիրոջ կողմից վճարելու պայմանով Ծառայությունից օգտվելու սակագները սահմանվում են բանկի կողմից և հրապարակվում www.americanexpress.am կայքում:

8. Ծառայությունն անվճար մատուցվում է ՀՀ տարածքում 150կմ շառավղով, որը գերազանցելու դեպքում Քարտատերն իրավունք ունի օգտվել Ծառայությունից Ծառայության արժեքի տարբերությունն իր կողմից վճարելու պայմանով: Բանկն իրավունք ունի չմատուցել Ծառայությունը Քարտատիրոջը, կասեցնել Ծառայության հետագա մատուցումը կամ դադարեցնել American Express Gold քարտի և Քարտատիրոջ հետ կնքված American Express Gold վարկային քարտի տրամադրման և սպասարկման պայմանագրի գործողությունը և պահանջել Քարտատիրոջից վերադարձնել Քարտը բանկին հետևյալ դեպքերում.

ա) եթե առկա է Քարտատիրոջ կողմից Ծառայությունից անվճար օգտվելու համար սահմանված պայմանների միտումնավոր խախտման կասկած կամ բանկին հայտնի դարձած հանգամանք,

բ) եթե առկա է բանկին խեղաթյուրված, կեղծ տեղեկատվության տրամադրմամբ պատվերների կասկած կամ բանկին հայտնի դարձած հանգամանք,

գ) եթե առկա է Ծառայությունից անվճար օգտվելու սեփական հնարավորություններն այլ անձանց օգտին որևէ այլ շահ հետապնդելու նպատակով կամ անշահախնդիր օգտագործելու կասկաց կամ բանկին հայտնի դարձած հանգամանք:

Սակագներ

—	Երևան քաղաքի սահմաններում - 11 000 ՀՀ դրամ
—	Երևան քաղաքի սահմաններից դուրս, մինչև 30 կմ - 18 000 ՀՀ դրամ
—	Երևան քաղաքի սահմաններից դուրս, 30 կմ-ից ավել - 1 կմ 500 ՀՀ դրամ